

շարարոյս արմատները, բանանք մեր հոգւց դը-
րակնքը պիտութեան զուարթաբար լրւաց առջև,
թող ներս մանէ և հաղածէ նորա խորչերու մէ-
ջէն նախապաշարմանց բազմադարեան խաւարու

Յիշենք եղբարը, մեր մանկանց Արամագնեան
Նորաբողբոջ շառաւիղին, որ Հայկ, Արտաշէս Բ.
և Վ. ու ամշապուհ փառաք թագաւորի են Հայոց
վերայ. Քաջութիւնն աշխարհաշէն բարգաւաճու-
թիւն և զիտութիւնք գեղեցիկ դպրութեանց Հա-
յի ճակատը յաղթական պսակներով պՃնազար-
գած են. Մենք այն քաջաց զաւակներն ենք, նո-
ցա գեղեցիկ ձրիցը ժառանգներ ենք. ունինք՝
բայց թաղած ենք. Սիրոյ և միութեան շունչն որ
միանգամ փչէ՝ իսկոյն կը վերացնէ ածիւնը. և
այն կենցանի ու աշխոյք կայծերը աստղիրի նման
փայլ կարձակեն ցոլացմամբ. Օ՞ն սէր և միու-
թիւն, եղբարը

10. $\frac{d}{dx} \ln x = \frac{1}{x}$

ԳԱԱՏԵՐԱԿՈՒԹՅՈՒՆ. Ի ՄԱՐԴՆ.

Աշխարհի ստեղծման օրից մինչև ցայսօր մարդկութիւնն թէ և բազմատեսակ փոփոխութեանց զանազան ընական ազդեցութեանց և քաղաքական ներգործութեանց ներքոյ ենթարկուած է, ըստց դարձեալ իւր կենսական շրջանն կշարունակէ միշտ դէպ ի յառաջ, Մարդն բնութեան ամենազնիւ ստեղծուածն և ամենաքնքոց ծաղիկն ջողով՝ որքան արժանաւոր է նորան էական կոչում և նշանակութիւն, որքան սեպուհ և բարձր են նորա պարտականութիւնքն շրջահայեաց նըկատմամբ, և քանի քանի խորհուրդներ և նշանաւոր կէտեր կշըջապատեն նորա առօրեայ կենաց ընդարձակ ասպարէզը, — Երբ մարդ մանկութեան փափուկ հասակի մէջ իւր տուաջին քայլ կդրծէ աշխարհի վիրայ, նորա մէջ ամենայն մի հոգեկան և բնական յատկութիւնք և ընդունակութիւնք կգտնուին արդէն իբր' երկրագործի նոր յերկիր ծգած սերմեր. նոքա զարգացած չեն սկիզբն են միայն կարօտ արդէն մեծամեծ հոգատարութեանց և խնամոց, որպէս զի կարող լինին առողջ կեանք ունենալ և անվնաս կերպիւ բնութեան սուրբ պարզունիրի իսկ նպատակը ի-

բազործել գետ ի ցանկալի հասունութեան կէտը
ժամանելով . դաստիարակութիւնը միայն պիտի
վճռէ այս դաստիարակութիւնը միայն իրբե ա-
րևու կենսագործ լից՝ Ներգործելով այն տեղ իւր
թափանցիկ ուժը՝ պիտի հասուցանէ զայն խր-
եանց էսկին պայմանին և բնութեան վիչ նպա-
տակին Դաստիարակութիւնը պիտի սկսի օրորոցի
միջից, մարմնական զարգացման հետ պիտի զար-
գանան և մանկան ընդունակութիւնքն, մի մա-
նուկ՝ ընացելով թէ ինչ վիճակի ազգեցութեանց
տակ է սկսել իւր մատաղ կեանիքի առաջին շըր-
ջանը, ամբողջ մարդկութեան մի մասն կոչվում
է նա արդէն, և ի՞նչպէս արդեօք պիտի պատրաս-
տուի նա ընութեան սուրբ ձեռնարկութիւնը շը-
տապալելու, իւր իրական կոչմանը հասանելու, և
միով բանիւ՝ խակապէս մարդ լինելու յօգուա-
մարդկութեան, դաստիարակութիւնը միայն պիտի
պարզեէ նորան այս դաստիարակութիւնը միայն
.յաջող լուծումն և երջանիկ վախճան կիսուստա-
նայ այս հարցերին:

Նախապէս դաստիարակութիւնը մի մանկան
վերաց սկսելու են նորա ծնողքը կատարելով իւշ-
րեանց ծնողական բարձր պարտականութիւնը. մեծ
է նոցա պարտիքը գեպ ի իւրեանց որդին. մայրա-
կան գրկի մեջ ամենայն բարցյական սկզբունք կա-
նոնաւոր կերպի պարտական են ծնողք մատաղ
հոգեց մեջ տպաւորիու պարտական են նոքա
բարցյական սկզբանց կաթոլի իւրեանց մանուկը
բաւական խնամելուց զինի սկսել և մտաւոր վար-
ժութեան և զարգացման բարի սերմերով նորա
քնքուշ սիրու մշակելու և ահա բնութեան
սուրբ սկիզբը գեպ ի իրական վախճան և նպա-
տակ յառաջնելու ուղիղ պողոսոցի մեջ կդանէ
զինքն, և ահա մի մարդ ևս մարդկաւթեան օգուա-
բեր և ամենակարևոր պայմաններով կսկսի զար-
գանալ և մարդկութեան անաբարձր և խորհր-
դաւոր բուրաստանի մեջ հստակութիւն ծաղիկ դառ-
նալու ժըս բնձարի:

Մի մանուկ նախ և յառաջ տնակոն զաստիա-
րակութիւն է շարօնակիելու. այս պայմանը ևս
իւր նշանակութեանը հասանելու համար կպա-
հանջէ ուսեալ մայրեր։ Մի առաջին կարեղու-
թիւն է մարդկութեան այս քննքց սեոի կը թու-

թիւնը, որը արդէն դարերի և ժամանակների մէջ եղած փորձերը հաւաստի արծարծենն Ամենայն մի մանուկ մօրից է ծնուած. եթէ գաստիարակած է բարոյակէս նորա մայրը, եթէ կճանաչէ իւր կեանքի և ծնողական սուրբ պարտականութիւնը ապա և բնութեան նորա խնամոց յանձնած քընքը ծաղիկը անտարակցո պիտի զարգանայ բարոյակէս, և մշտառորապէս չչեղուի իւր բարձր վախճանից, և երջանկութեան պահկը ընդունէ իւր զի՞ւց վերայ:

Փառք ժամանակիս, որ մեր ազդն ևս ճանաչել է արդէն մատաղ Հայ օրիորդների գաստիարակութեան նշանակութիւնը քաղաքական կեանքի համար, նոցա գաստիարակութեան անթիւ օգուտներն ազդութեան համար. ամենայն տեղ ճիգն ի գործ կը դուռի նոցա կրթութեան համար ուսմանց տաճարներ հիմնելու և նոցա ուսումնական և բարոյական ընթացքն յառաջարիմութեան պայմաններ գտնելու, ուրեմն երջանիկ յօյ և մեծամեծ բարութիւններ խոստացող ազագայ. Գաստիարակութիւնը որբան երջանկութիւնն է մի ազդի համար, նորա ամենայն մի ճառագայթը կենդանի կեանք գործելու ազդութեան ունի, նորա անշամանդաղ լոյսը միայն կխոստանայ ազնիւ և հանրօգուտ բնութիւններն զարգացնել մարդոյ մէջ, հասուցանել նորան այն տեղ՝ ուր որ կարհանջէ իւր բարձր կոչումը՝ ուր և դիմելու մի սրբազն պարտք կոյ նոքուած իւրաքանչիւր մարդոյ վերայ, Մարգն բարիացած է հոգաց և մարմնուց, որոնց ներդաշնակ զարգացմանն է ամենայն մի մարդոյ բարձր նշանակութիւնը թէ հոգոյ և թէ մարմնոյ բարեսպէս զարգացումը ամփոփուած է գաստիարակութեան նշանաւոր պայմանների մէջ. գաստիարակութեամբ պիտի նոքա յառաջն իւրեանց էութեան մէջ, գաստիարակութեամբ ոիւտի ծաղկն նորա և զարգանան, ինչպէս որ կարհանջէ իւրեանց խորհրդաւոր կազմութիւնը, և հետեւաբար մարդը գաստիարակութեամբ միայն պիտի ստեղծադործի մարդ. Որբա՛ն բարձր է գաստիարակութեան նշանակութիւնը, որբա՛ն սուրբ և պաշտելի են նորա գործած բարութիւններն մարդկութեան մէջ. Նորա վառաւոր տաճարի նուիրական սեղանոցն առջև թող ի ծունկ խոնար-

հի ամենայն մի մարդ, ուղեցոյց մի հրեշտակ Ճանաչելով զայն դէպ ի բարի և ուսեալ մարդկութիւն և հետեւաբար գէպ ի յԱստուած:

ՅՈՎԱՆՆԻՍ ՄՊՈԵԴՂԵԱՆՑ.

ԿԱՐՈՑ.

Ո՞հ, երբ Հայաստան, խղանկ Հայաստան,
Կորցրուց ամեն ինչ, ամեն վառը եւ խինոր,
Լացին իւր վանքեր, դաշտեր պատուական,
Արծագանք թողով Հայ հոգւցն ի Թինդ.
Լացին իւր որդիի
Զիւրեանց Հայրենիք:
Բաղտազուրկ Մասիս ամպերու մէջէն
Հառաջեց, ողբաց զիւր աշխարհ անբաղտ,
Ո՞հ նորա յետին, հարուածքի օրէն,
Իւր ներմակ զիսոյն քող մի տարաքաղտ
Ծածկեց սպաւոր,
Ելաց իւր վաս օր:

Սուրբ Հայրենիքի զրկէն սիրասուն,
Նժենե՞ն եւ պանդուխու ցրուեցան Հայեր,
Կարօս միմեանցից տարփանօր սիրոյն
Անցուցին տիւուր կեանքերուն օրեր,
Ո՞հ, խեղճ Հայրենիք
Շաւարշան, Տղմուտ ու անման Վարդան
Հայոց սրակերուն Թողին սուրբ պատկեր,
Սիրել սուրբ կրօն, սիրել Հայաստան,
Ճնշել յաւիտեան հոգւով Հայասէր.

Ո՞նդ Մափաւեց արին
Հայոց բաջերուն:
Երկնիքի Երկրի Արարին արդար
Թող վինի պաշտպան ցրուած Հայերու,
Թող Հայի անուն շնչէ զարէ զար,
Մթին ստուիրից դառնալ դէպ ի լոյս.

Մեր բաղտին բապտեր
Վառէ միայն Տէր:
Թող մեր հեռաւոր սրտեր ու հոդիք
Աղբութեան սիրով յօդին միմեան հետ,
Տանել մեր ուղին ի լոյս դեղեցիկ,
Ուր միայն ծածկի երջանկութեան կէտ,
Ի լոյս կրթութեան,
Ուր փառք Հայութեան: